


## ՈՒԴԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ՊԵՏՐՈՍ Լ-ԻՆ



ոսկվայի Ֆեռդալա-ճորտատի-  
րական պետական արխիվի  
Արտաքին գործերի կուեգիայի  
Հայկական ֆոնդի 1724 թվի  
№ 4 թղթապանակում գտնվում է ուղիների մի  
դիմումը հայերեն լեզվով Պետրոս Լ-ի վրա:  
Այդ դիմումը ցարական արքունիք են ուղար-  
կել Ազգային պատուի հատուկ  
պատգամավորության միջոցով:

Ուղիներն իրենց դիմումի մեջ նկարագրել  
են կրոնական այն հալածանքները, որոնց  
ենթարկվել են իրենք: — Պարսկի իշխանա-  
վորները, տեղական սյունի ֆեռդալների  
հետ, քանդել են նրանց եկեղեցիները և հար-  
կադրել են մահմեդականություն ընդունել,  
այրել են անգամ Եղիշեի անոնը կրող իրենց  
կենտրոնական տաճարը: Զցանկանալով նա-  
մակի մեջ մանրամասնությամբ գրել իրենց  
ծանր վիճակը, նրանք խնդրել են այդ մասին  
հարցնել նամակատար պատգամավորու-  
թյունից:

Ուղիները Պետրոս Լ-ից խնդրել են, որ նա  
մի հրովարտակ տա իրենց պատգամավոր-  
ներին բերելու, որ հետագայում այրված Ե-  
ղիշեի անվան տաճարի տեղ նոր տաճար

**Մեծառնել եւ գերահոչակ, գովելի եւ պատուելի, թա՞ եւ պարծանե  
ազգին մերոյ վերոյ գրեալս:**

Երես անկեալ և արտասույլից նամբու-  
րեմի զերբանս ուսաց ենց, աղաշանօֆ և պա-  
ղատանօֆ զեկուցանեմի զամենայն յան-  
ցանեն և զորպէսն տեղիս ի հրամեաց ենց՝  
թէ այսքան տարիս մեր գլուխն ի՞նչ բերին

կառուցեն: Ուղիները լսել են, որ Պետրոս Լ-ը  
գորքով գալիս է՝ «Ճիմա լսեցինք, որ սայա-  
լու ոտն մեր գլուխն կոփսելու գալիս է, մեր  
աշխն լոյս», և ցանկացել են նախապես Ե-  
ղիշեի վանքի վերաշինման թույլտվությունն  
ունենալ իրենց ձեռքում. «Սուրբ Եղիշեի ա-  
ռաքելոյն համար մին փոքր ուրախութեան  
գիր շաղավաթ անս դոցա ձեռօքն (այսինքն՝  
պատգամավորների ձեռքով— Ա. Ա.) տեղիս  
տառապելոցն՝ իրը եկեղեցոյ տեղն հրամնոց  
դուկավթիցն վանք լինի ժամանակավ:

Վավերագիրը կովկասագիտության համար  
արժեքավոր է ո՞չ այն պատճառով, որ այն  
մեզ որոշ պատկերացում է տալիս շահական  
Պարսկաստանի և նրա դրածո պավտապետ-  
ների հարստահարությունների և հալածանք-  
ների վերաբերմամբ— այդ մասին մենք ժա-  
մանակակիցների կողմից բաղմաթիվ և հան-  
գամանորեն գրված սկզբնաղբյուրներ ու-  
նենք— այլ որ այն գրված է ուղիների՝ եր-  
բեմնի մի մեծ ժողովրդի բեկորների կող-  
մից, որոնց մասին մենք շատ կցկատը տե-  
ղեկություններ ունենք վերջին դարերից:

Ստորև հրատարակում ենք այդ վավերա-  
գիրը:

**անօրէնք և անհաւատք: Նախ եկեղեցիք այ-  
րեցին և արարին ընդ մեզ բազում շարիք՝  
ի ներհակ առ հաւատոց մերոց: Քահանայք  
ուրացուին և ոմն բապանեցին, կանայք ընդ  
ուրդովք իւրեանց գերեվարեցին, որդիք ընդ**

մայրս նմին նոցին: Վաճե՛ և անապատք ան-  
մարդաբակ եղեալ կան: Մինչև այսօր և մե՛ք  
մնացողք կաճե՛ ի մէջ շարշարանաց. ո՞չ  
կենդանի եմք և ո՞չ մեռած:

Մե՛ք աղուվանք եմք և ազգով ուսիիք, Եղի-  
շէի առաքելոյն քարոզութեամբն մեր նախ-  
նիք Աստուած հանատացելալիք են. սուրբ ա-  
ռաքլոցն նահատակութեան տեղինն առ մեզ  
է: Քո հրամանոցն յայտնի է, որ յառաջմէ  
մեր ազգին իշխանութիւն ոչ կայր, որ առա-  
մասն նահատակութեան տեղն փառաւոր  
վաճե՛ շինէին, միայն թէ մեր նախնիքն մին  
փոքր եկեղեցի շինեալ էին, մե՛ք նովաւ կեանք  
էինք անցուցանում: Այժմս անօրէնք այրե-  
ցին, և մեզ զօրով ուրացուցին: Մածուկ մեր  
օրէնքն պահում ենք, և թէ մեծ և թէ փոքր  
յերեկի՞ թի զօրով թրփութիւն են անել տա-  
լիս:

Յիմա լսեցինք, որ սայալու ոտն մեր  
զգուին կոխելու գալիս է: Մեր աշքն լոյս,  
կու խնդրեմք ի Քրիստոսէ, որ մեր կեանքն  
կարե առնէ և հրամեց կեանքն երկար ա-  
րացէ, որ զմեզ ի կերութենէ ազատես ի  
փառ Աստուածածնիս, և մե՛ք միշտ մեղա-  
ւոր թերանով ի Տեանէ երկար կեանք  
խնդրով լինեմք: Այլ ի՞նչ նառեմք բան,  
ծառայ եմք... կարում չեմք ամէն բան գրել  
անհի: Պիտի որ վասն Քրիստոսի սէրն և մեր

ամենայն անհան այդ եկողիք, ողորմելի բա-  
նանայիս և մարդկայիսէ իմանաւ:

Մեր խնդիրքն այս է, որ մին քանի պէտ-  
քական մեծիդ ծառայք (որ) կայ(r) տեղս,  
այդ մարդոց ենա խորհուրդ արել են, զու-  
լուղդ ողարկել, որ Սուրբ Եղիշիէ առաքելոյն  
համար մին փոքր ուրախութեան զիր շալա-  
վար անես, դոցա ձեռօքն տեղիս տառապե-  
լոցն՝ իրը եկեղեցոյ անդն հրամեց դոլվա-  
րիցն վաճե՛ լինի ժամանակօվ: Եւ սուս յետ  
անօրինաց ներհակութեան առնօ են, մեծիդ  
բարձր հրամեօլն: Մենացեալ եմք մէջ յերկիր.  
ոչ զիսում խելք կայ, ոչ աշաց լոյս: Կամ  
հրամեացդ է: Ֆկչս մառով ֆիշ գրեցինք, ի-  
մաստուեղ շատ իմացիր: Արեկիդ մատաղ,  
մեզ մին նար:

Լեր ողջ ի պարծանս մեր:

ՈՒՃՀԳ (1724) բուին մարտ ամսի բան  
գրեցաւ:

Յիմարարար զայս մխիրարական խնդիրքս  
արարինք հրամեցնոցէդ և մեծդ ինչպէս կամք  
կառնես, հրամանք հրամեցդ է: Մինչի զա-  
լուղ զօրաց լոց, այդ մարդիկը յետ յենս,  
մինչև դոցա կալն մեր աշքն նահապարենին  
կու լինի: Երկանուր Թագաւորն մեզ և զօ-  
րացդ նովանի եղիցի: Եւ մեծդ ամենայն նա-  
հատացեալ հայոց, մեծին և տնանկին:

(ՂԱՓՔԹ, Փ. Արմենուկու ծելա № 4, առ 1724 թ., լ. 27).

